ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ

Ղ Ե Կ Ա Վ Ա Ր

Երևան – 10, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն 1

« » 2017 թ. N

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ-ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ
պարոն ԱՐԱ ՍԱՂԱԹԵԼՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Սաղաթելյան

Համաձայն «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 66-րդ և 77-րդ հոդվածների՝ Ձեզ ենք ներկայացնում՝

1) «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (*Պ-156-18.10.2017-ՏՏԳՔ-011/0*) վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության առաջարկությունը.

2) Հայաստանի Հանրապետության վարչապետի 2017 թվականի նոյեմբերի 16-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ (հարակից զեկուցող) նշանակելու մասին» N 1315-Ա որոշումը:

Հարգանքով՝

ՎԱՀԵ ՍՏԵՓԱՆՅԱՆ

«ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Պ-156-18.10.2017-ՏՏԳԲ-011/0) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆԸ

Ներկայացվող նախագծի համաձայն՝ համայնքի ղեկավարը կարող է ունենալ տեղակալ: Նշված ձևակերպումից հետևում է, որ համայնքի ղեկավարը կարող է նաև չունենալ տեղակալ, ինչն ընդունելի չէ, քանի որ ի թիվս այլ գործառույթների նա նաև փոխարինում է համայնքի ղեկավարին: Այսպիսով, անհասկանալի է, թե համայնքի ղեկավարի տեղակալի հաստիքի բացակայության դեպքում ով է փոխարինելու համայնքի ղեկավարին:

Նախագծում «տեղակալ» բառը կիրառվում է թե եզակի, թե հոգնակի թվով: Նպատակահարմար է, որպեսզի այն օգտագործվի եզակի թվով, քանի որ այդ դեպքում վերջինիս վերաբերող դրույթները կտարածվեն նաև մեկից ավելի տեղակալների վրա:

Նախագծի 1-ին հոդվածով նախատեսվող օրենքի 30-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ համայնքի ղեկավարի տեղակալի պաշտոնը հայեցողական պաշտոն է, մինչդեռ այն արդեն իսկ նախատեսված է «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածի 7-րդ մասով:

Հաշվի առնելով վերը նշվածը՝ առաջարկում ենք նախագծի 1-ին հոդվածով նախատեսվող օրենքի 30-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«**Հոդված 30. Համայնքի ղեկավարի տեղակալը**

Համայնքի ղեկավարն ունի տեղակալ (տեղակալներ):

Համայնքի ղեկավարի տեղակալին պաշտոնի նշանակում և պաշտոնից ազատում է համայնքի ղեկավարը:

Համայնքի ղեկավարի տեղակալն իրականացնում է համայնքապետարանի աշխատակազմի կանոնադրությամբ իրեն վերապահված գործառույթները:

Համայնքի ղեկավարի հանձնարարությամբ տեղակալը (տեղակալներից մեկը) փոխարինում է համայնքի ղեկավարին վերջինիս բացակայության ժամանակ:»: